ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

ՈՐՈՇՈՒՄ

«13» հոկտեմբերի 2021 թվականի N 245-Հ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԱՆԱՍՆԱԲՈՒԺՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԿԻՐԱՌՎՈՂ ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հաշվեքննիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 9-րդ մասի 5-րդ կետով՝ Հաշվեքննիչ պալատը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության կողմից անասնաբուժության մեջ կիրառվող պատվաստանյութերի ձեռքբերման նկատմամբ հաշվեքննության արդյունքների վերաբերյալ ընթացիկ եզրակացությունը՝ համաձայն հավելվածի:

ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ
ՆԱԽԱԳԱՀ Լ. ՅՈԼՅԱՆ

Հավելված
Հաստատվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի
2021թ. հոկտեմբերի 13-ի թիվ 245-Ա որոշմամբ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԱՆԱՍՆԱԲՈՒԺՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԿԻՐԱՌՎՈՂ ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅՈՒՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2021

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ 2

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ 6

ԱՆԿԱԽ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԾԻՔ 7

ԱՄՓՈՓԱԳԻՐ 9

I. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ 13

II. ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ 14

1. ՀՀ ԷՆ ԳՀԱՊՁԲ-19/44 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրի վերաբերյալ 14

2. ՀՀ ԷՆ ԲՄԱՊՁԲ-19/1 ծածկագրով /չկայացած/ գնման ընթացակարգի վերաբերյալ 20

3. ՀՀ ԷՆ ԲՄԱՊՁԲ-19/1 ծածկագրով կնքված պայմանագրի ապրանքի մատակարարման ժամկետների փոփոխության վերաբերյալ 24

4. ՀՀ ԷՆ ԲՄԱՊՁԲ-19/1 ծածկագրով կնքված գնման պայմանագրի միակողմանի լուծման վերաբերյալ 26

5. ՀՀ ԷՆ ԲՄԱՊՁԲ-19/1 ծածկագրով գնման ընթացակարգի բանկային երաշխիքների /որակավորման ապահովում և պայմանագրի ապահովում/ վերաբերյալ 28

III. ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ 32

6. ԷՆ-ԲՄԱՊՁԲ-19/1» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում ՌԴ «Ցենտր ինվեստ» բանկից բանկային երաշխիքներով սահմանված գումարների ստացման վերաբերյալ 32

IV. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՄԲ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԱՅԼ ՓԱՍՏԵՐ 34

7. ՀՀ-ԷՆ-ՀՄԱԱՊՁԲ-20/50 ծածկագրով գնման ընթացակարգի վերաբերյալ 34

8. «ՀՀ ԷՆ-ԳՀԱՊՁԲ-19/44» և «ՀՀ-ԷՆ-ՀՄԱԱՊՁԲ-20/50» ծածկագրերով գնման գործընթացների արդյունքում առաջացած հարկային պարատավորությունների վերաբերյալ 37

9. «ՀՀ ԷՆ-ԳՀԱՊՁԲ-19/46» ծածկագրով գնման գործընթացի վերաբերյալ ... 37

10. «Ագաստ» ՍՊԸ-ից ձեռքբերված անասնաբուժության մեջ կիրառվող պատվաստանյութերի գնման ընթացակարգերի վերաբերյալ 38

Հաշվեքննության հիմքը	ՀՀ հաշվեքննիչ պալատի 2021 թվականի մայիսի 19-ի թիվ 158-Ա որոշում, ՀՀ հաշվեքննիչ պալատի 2021 թվականի հուլիսի 30-ի թիվ 209-Ա որոշում:
Հաշվեքննության օբյեկտը	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն
Հաշվեքննության առարկան	Անասնաբուժության մեջ կիրառվող պատվաստանյութերի ձեռքբերման համապատասխանության հաշվեքննություն:
Հաշվեքննության չափանիշները	1. ՀՀ հարկային օրենսգիրք 2. «Գնումների մասին» ՀՀ օրենք, 3. ՀՀ աշխատանքային օրենսգիրք, 4. ՀՀ մաքսային օենսգիրք 5. ԵՏՄ պայմանագիր
Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը	2020 թվականի հունվարի 1–ից մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31–ը:
Հաշվեքննության կատարման ժամկետը	2021 թվականի հունիսի 3-ից մինչև 2021 թվականի նոյեմբերի 30-ը:
Զննման և դիտարկման ժամկետը	2021 թվականի հունիսի 3-ից մինչև 2021 թվականի հուլիսի 7-ը:
Հաշվեքննության մեթոդաբանությունը	Հաշվեքննությունն իրականացվել է «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի, Հաշվեքննիչ պալատի ֆինանսական և համապատասխանության հաշվեքննության մեթոդաբանությունների, Իրականացվել է համապատասխանության հաշ-վեքննություն, որի ընթացքում կիրառվել են հարցում, արտաքին հաստատում, վերլուծական ընթացակարգ, վերակատարում, վերահաշվարկ, զննում և դիտարկում ընթացակարգերը:

Հաշվեքննությունն իրականացրած կառուցվածքային ստորաբաժանում

Հաշվեքննությունն իրականացվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի երրորդ վարչության կողմից, որի աշխատանքները համակարգում է ՀՀ հաշվեքննիչ պալատի անդամ Գեղամ Հովեյանը:

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

Նախարարություն	Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն:
ՊԵԿ	Պետական եկամուտների կոմիտե
ԱԱՀ	Ավելացված արժեքի հարկ
ԳԾԿ	«Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ:
ՀԱԲԼԾԿ	«Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ:
ԽԵԿ	Խոշոր եղջերավոր կենդանի
ՄԵԿ	Մանր եղջերավոր կենդանի
ԵՏՄ	Եվրասիական տնտեսական միություն

ԱՆԿԱԽ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԾԻՔ

ՀՀ էկոնոմիկայի նախարարին

Մենք հաշվեքննության ենք ենթարկել ՀՀ էկոնոմիկայի նախարարության /այսուհետ՝ Նախարարություն/ կողմից 1116-11001 Ծրագրի «Առողջապահական և լաբորատոր նյութերի» 4266 տնտեսագիտական հոդվածով անասնաբուժության մեջ կիրառվող պատվաստանյութերի /Ծաղիկ և Դաբաղ/ ձեռքբերման /Այս գլխում այսուհետ՝ Ծրագիր/ համապատասխանությունը ՀՀ օրենքներին և այլ իրավական ակտերին, ինչպես նաև քաղաքացիաիրավական հարաբերությունների շրջանակներում կնքված այլ գործարքներով սահմանված չափանիշներին և պահանջներին: Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակահատվածն է՝ 2020 թվականի հունվարի 1-ից մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը:

Ղեկավարության պատասխանատվությունը խնդրո առարկայի համար

Ղեկավարությունը պատասխանատվություն է կրում ՀՀ օրենքներին և այլ իրավական ակտերին, ինչպես նաև քաղաքացիաիրավական հարաբերությունների շրջանակներում կնքված այլ գործարքներով սահմանված չափանիշներին և պահանջներին համապատասխան Ծրագրի իրականացման համար:

Հաշվեքննողի պատասխանատվությունը

Մեր պատասխանատվությունն է անցկացված հաշվեքննության արդյունքում արտահայտել կարծիք ՀՀ օրենքներին և այլ իրավական ակտերին, ինչպես նաև քաղաքացիաիրավական հարաբերությունների շրջանակներում կնքված այլ գործարքներով սահմանված չափանիշներին և պահանջներին Ծրագրի համապատասխանության վերաբերյալ: Մենք հաշվեքննությունն անցկացրեցինք «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի, «Հաշվեքննողների համար ներքին ծառայողական հարաբերությունների շրջանակում կիրառվող էթիկայի կանոնների», Աուդիտի Բարձրագույն Մարմնի Միջազգային Ստանդարտներին համապատասխան մշակված «Համապատասխանության հաշվեքննության մեթոդաբանության» համաձայն: Այդ մեթոդաբանությունով պահանջվում է, որ մենք հետևենք վարքագծի սկզբունքների պահանջներին և հաշվեքննությունը պլանավորենք և իրականացնենք այնպես, որպեսզի ձեռք բերենք ողջամիտ երաշխիք այն մասին, որ Ծրագրի կատարումը զերծ է էական անհամապատասխանություններից:

Հաշվեքննության աշխատանքները ներառում են ՀՀ օրենքներին և այլ իրավական ակտերին, ինչպես նաև քաղաքացիաիրավական հարաբերությունների շրջանակներում կնքված այլ գործարքներով սահմանված չափանիշներին և

պահանջներին Ծրագրի համապատասխանության վերաբերյալ հաշվեքննության ապացույցի ձեռքբերում: Հաշվեքննության ընթացակարգերի ընտրությունը կախված է հաշվեքննողի դատողությունից, ներառյալ՝ անհամապատասխանության հետևանքով ծրագրի կատարման էական անհամապատասխանության ռիսկերի գնահատումը:

Ռիսկերի նման գնահատում իրականացնելիս հաշվեքննողը դիտարկում է ներքին հսկողության համակարգը՝ կապված ծրագրի իրականացման հետ՝ կազմելու տվյալ հանգամանքներին համապատասխան հաշվեքննության ընթացակարգեր, սակայն ոչ ներքին հսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու նպատակով:

Մենք գտնում ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան հաշվեքննության ապացույցներ համապատասխանության հաշվեքննության մեր կարծիքը հիմնավորելու համար:

Համապատասխանության հաշվեքննություն՝ բացասական կարծիքի հիմք

Ինչպես ներկայացված է սույն ընթացիկ եզրակացության 3-6-րդ կետերում, Նախարարության կողմից 2020 թվականին Ծրագով սահմանված գնման գործընթացները իրականացվել են ՀՀ Գնումների օրենսդրության, ինչպես նաև քաղաքացիաիրավական հարաբերությունների շրջանակներում կնքված այլ գործարքներով սահմանված չափանիշների և պահանջների խախտումներով, որոնք հանգեցրել են հսկողական գործընթացների թերացումների՝ արդյունքում նախատեսված բանկային երաշխիքները /որակավորման ապահովում և պայմանագրի ապահովում/ չեն մուտքագրվել ՀՀ պետական բյուջե:

Համապատասխանության հաշվեքննություն՝ բացասական կարծիքի եզրահանգում

Մեր կարծիքով, հաշվի առնելով «***բացասական կարծիքի հիմք***» պարագրաֆում նկարագրված հարցերի ազդեցությունը, Նախարարության կողմից Ծրագրի կատարումը անասնաբուժության մեջ կիրառվող պատվաստանյութերի ձեռքբերման մասով բոլոր էական առումներով չի համապատասխանում ՀՀ օրենքներին և այլ իրավական ակտերին, ինչպես նաև քաղաքացիաիրավական հարաբերությունների շրջանակներում կնքված այլ գործարքներով սահմանված չափանիշներին և պահանջներին:

ՀՀ հաշվեքննիչ պալատի անդամ՝ Գեղամ Հովեյան
13 հոկտեմբերի
2021 թվական ՀՀ հաշվեքննիչ պալատ, Բաղրամյան 19 փող., ք. Երևան, Հայաստան

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի կողմից իրականացվել է ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից անասնաբուժության մեջ կիրառվող պատվաստանյութերի ձեռքբերման համապատասխանության հաշվեքննություն:

Հաշվեքննության կատարման ժամանակահատվածն է 2021թ. հունիսի 3-ից մինչև 2021թ. հուլիսի 30-ը:

Հաշվեքննության օբյեկտի կողմից հիմնականում ստացվել է բավարար տեղեկատվություն հաշվեքննություն իրականացնելու համար:

Ստորև հաշվեքննությամբ արձանագրված հիմնական փաստերն են:

ՀՀ ԷՆ ԳՀԱՊՁԲ-19/44 *և* ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրի մասով արձանագրվել են անհամապատասխանություններ կապված պատվաստանյութերի ձեռքբերման գնի հետ /գնային առաջարկի գումարը ՀՀ պետական բյուջե վճարվելիք ԱԱՀ-ի հետ միասին/, որը գերազանցել է գնման հայտով սահմանված ֆինանսական միջոցները, ինչի հետևանքով մրցույթը պետք է չկայացած համարվեր և չկնքվեր ապրանքների ձեռքբերման պայմանագիր: Նշված անհամապատասխանությունը հանգեցրել է խեղաթյուրման պայմանագրային գնի և ՀՀ պետական բյուջե վճարվելիք ԱԱՀ-ի մասով:

ՀՀ ԷՆ ԲՄԱՊՁԲ-19/1 ծածկագրով /չկայացած/ գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրի մասով արձանագրվել են անհամապատասխանություններ կապված պատվաստանյութերի ձեռքբերման գնի հետ /գնային առաջարկի գումարը ՀՀ պետական բյուջե վճարվելիք ԱԱՀ-ի հետ միասին/, որը գերազանցել է գնման հայտով սահմանված ֆինանսական միջոցները, ինչի հետևանքով մրցույթը պետք է չկայացած համարվեր և չկնքվեր ապրանքների ձեռքբերման պայմանագիր:

ՀՀ ԷՆ ԲՄԱՊՁԲ-19/1 ծածկագրով կնքված պայմանագրի ապրանքի մատակարարման ժամկետների փոփոխության վերաբերյալ առկա է անհամապատասխանություն լրացուցիչ կնքվելիք համաձայնագրի հետ:

ՀՀ ԷՆ ԲՄԱՊՁԲ-19/1 ծածկագրով կնքված գնման պայմանագրի միակողմանի լուծման հետ առկա է անհամապատասխանություն՝ Նախարարության կողմից մատակարարին պատշաճ կերպով չի ծանուցվել պայմանագիրը միակողմանի լուծելու մասին:

ՀՀ ԷՆ ԲՄԱՊՁԲ-19/1 ծածկագրով գնման ընթացակարգի բանկային երաշխիքների /որակավորման ապահովում և պայմանագրի ապահովում/ մասով՝ առկա է անհամապատասխանություն կապված բանկային երաշխիքների վերջնաժամկետների սահմանման հետ, որը չի համապատասխանում կնքված պայմանագրի դրույթներին:

ԷՆ-ԲՄԱՊՁԲ-19/1» ծածկագրով գնման ընթացակարգի մասով առկա է խեղաթյուրում կապված ՌԴ «Ցենտր ինվեստ» բանկից բանկային երաշխիքներով սահմանված գումարների ստացման հետ:

ՀՀ-ԷՆ-ՀՄԱԱՊՁԲ-20/50 ծածկագրով գնման ընթացակարգի մասով առկա է հսկողության գործընթացի թերացում՝ պատվաստանյութի համար կնքված պայմանագիրը առանց լուծելու Նախարարության կողմից սկսվել է նոր պայամանագրի կնքման գործընթաց:

«ՀՀ ԷՆ-ԳՀԱՊՁԲ-19/44» և «ՀՀ-ԷՆ-ՀՄԱԱՊՁԲ-20/50» ծածկագրերով առկա է հսկողության գործընթացի թերացում կապված գնման գործընթացների արդյունքում առաջացած հարկային պարատավորությունների կատարման հետ:

«ՀՀ ԷՆ-ԳՀԱՊՁԲ-19/46» ծածկագրով գնման գործընթացի շրջանակներում Նախարարության և «Ագաստ» ՍՊԸ-ի միջև կնքված պայմանագիրը միակողմանի լուծել է, ինչի հետևանքով 2020 թվականի ապրիլի 21-ից «Ագաստ» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Սույն հաշվեքննությունը իրականացվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի 2021 թվականի մայիսի 19-ի թիվ 158-Ա որոշման հիման վրա: Միևնույն ժամանակ ՀՀ հաշվեքննիչ պալատի 2021 թվականի հուլիսի 30-ի թիվ 209-Ա որոշմամբ

հաշվեքննության կատարման ժամկետը երկարացվել էր: Հաշվեքննիչ պալատի մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն հաշվեքննության արդյունքների հիման վրա կազմվել է թվով երկու արձանագրություն, որոնք 2021 թվականի հուլիսի 9-ի թիվ ՀՊԵ-362 և 2021 թվականի սեպտեմբերի 16-ի թիվ ՀՊԵ-459 գրություններով ներկայցվել են հաշվեքննության օբյեկտին: Վերջինս հաշվեքննության արձանագրությունն ստանալուն հաջորդող 10 օրվա ընթացքում համաձայնության դեպքում ստորագրում է այն կամ գրավոր ներկայացնում է առարկություններ և բացատրություններ: Հաշվեքննության օբյեկտի կողմից 2021 թվականի հուլիսի 9-ի թիվ ՀՊԵ-362 գրությամբ ներկայացված արձանագրությանը հաշվեքննության օբյեկտը պարզաբանում է ներկայացրել օրենքով սահմանված ժամկետից 10 օր հետո: Իսկ 2021 թվականի սեպտեմբերի 16-ի թիվ ՀՊԵ-459 գրությամբ ներկայացված արձանագրությանը՝ 9 օր հետո:

Քանի որ, հաշվեքննության օբյեկտի կողմից երկու արձանագրությունների համար ներկայացվել է նույն բովանդակությամբ պարզաբանում, որը հնարավոր չէ նույնականացնել արձանագրությամբ ներկայացված կետերի հետ: Հետևաբար պարզաբանումը հաշվեքննողների կողմից ընդունելի չէ:

Ստորև ամբողջությամբ ներկայացվում է Նախարարության պարզաբանումը.

ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն) «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության կողմից անասնաբուժության մեջ կիրառվող պատվաստանյութերի ձեռքբերման հաշվետվության առաջադրանքի» շրջանակներում հաշվեքննողների կողմից կազմված հաշվեքննության վերաբերյալ հայտնում է հետևյալը.

1. 1116 Ծրագրի 11001 միջոցառման շրջանակներում Նախարարության կողմից հակադաբաղային և մանր եղջերավոր կենդանիների ծաղիկի և խոշոր եղջերավոր կենդանիների հանգուցավոր մաշկաբորբի ասոցացված կուլտուրալ, չոր, վիրուսային պատվաստանյութերի հրավերը հրապարակվել է համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի,

2. մրցույթների արդյունքում հաղթող ճանաչված մասնակիցների հետ 24.01.2020 թվականի N ՀՀ ԷՆ-ԳՆԱՊՁԲ-19/44 և 28.02.2020 թվականի N ՀՀ ԷՆ-ԲՄԱՊՁԲ-19/1, ինչպես նաև 22.07.2020 թվականի N ՀՀ ԷՆ-ՀՄԱԱՊՁԲ-20/50 կնքված պայմանգրերում ներառվել է 3.1 կետը՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասը,
3. միաժամանակ ՀՀ ԷՆ ԳՀԱՊՁԲ-19/44 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 2-րդ հավելված համաձայն (գնային առաջարկ)՝ եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա տվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է սույն հավելվածի 5-րդ սյունակում,
4. ներկայացրած գնային առաջարկների համաձայն Մասնակիցները չեն հանդիսացել ԱԱՀ վճարող և ՀՀ ԷՆ ԳՀԱՊՁԲ-19/44 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2019 թվականի դեկտեմբերի 20-ին թիվ 3 որոշմամբ 1-ին չափաժնի մասով ընտված մասնակից է ճանաչվել «Կենդանիների առողջության պահպանման ֆեդերալ կենտրոն» ՓՊԲԿ-ն, իսկ 2-րդ չափաբաժնով «Ագաստ» ՍՊԸ-ն, որոնց ներկայացված գնային առաջարկները չեն գերազանցել նախահաշվային արժեքը: Ուստի, գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու հիմքերը բացակայել են,
5. ՀՀ ԷՆ ԲՄԱՊՁԲ-19/1 ծածկագրով գնման ընթացակարգի վերաբերյալ՝ Նախարարության կողմից կազմակերպված ՀՀ ԷՆ ԲՄԱՊՁԲ-19/1 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում «Սկիֆ Ագրոս» ՍՊԸ-ի հետ կնքվել է պայմանագիր և սահմանվել մատակարարման վերջնաժամկետ մինչև 2020 թվականի մայիսի 31-ը,
6. Նախարարության կողմից մատակարարման ժամկետի փոփոխություն տեղի չի ունեցել: «Սկիֆ Ագրոս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բանկային երաշխիքները (որակավորման և պայմանագրի ապահովումները) ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան:

I. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

հազ.դրամ

Տարեկան ճշտված պլան	Դրամարկղային ծախս	Փաստացի ծախս
318,188.68	318,185.68	355,290.26

II. ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

1. ՀՀ ԷՆ ԳՀԱՊՁԲ-19/44 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրի վերաբերյալ

Առկա է անհամապատասխանություն 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության թիվ 526-Ն /այսուհետ՝ Թիվ 526-Ն Որոշում/ որոշման 40—րդ կետի 5-րդ ենթակետի ա/ և է/ պարբերությունների մասով:

Առկա է անհամապատասխանություն ՀՕ-195 օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջի հետ:

Ծրագիրն իրականացվում է երկու բաղադրիչներով՝

1. Կանխարգելիչ, ախտորոշիչ և ախտահանիչ միջոցների, ինչպես նաև անասնաբուժական պարագաների ձեռքբերում,
2. Հակահամաճարակային միջոցառումների իրականացում:

Ծրագրի առաջին բաղադրիչի իրականացման համար էկոնոմիկայի նախարարության /այսուհետ՝ Նախարարություն/ կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով կատարվում է կանխարգելիչ և ախտորոշիչ միջոցների ձեռքբերում, որը ի պահ է հանձնվում «Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ՝ ՀԱԲԼԾԿ), հետագայում տրամադրվում է ԳԾԿ-ին՝ 1116 Ծրագրի 11001 միջոցառման երկրորդ բաղադրիչի իրականացման համար:

Ծրագրի իրականացման նպատակը հանրապետության տարածքում կենդանիների վարակիչ հիվանդությունների նկատմամբ պատվաստված անասնագլխաքանակի կայուն վարակամերժության ֆոնի ստեղծումն ու պահպանումն է:

Հավելվածով ներկայացված է 2020 թվականի ընթացքում Նախարարության կողմից կազմակերպված գնման գործընթացների արդյունքում ձեռքբերված «Առողջապահական և լաբորատոր նյութերը»:

1116 Ծրագրի 11001 միջոցառման շրջանակներում Նախարարության կողմից 2020 թվականի ընթացքում կատարված գնումներից՝ ՀՀ ԷՆ ԳՀԱՊՁԲ-19/44 և ՀՀ ԷՆ ՀՄԱԱՊՁԲ-20/50 ծածկագրերով ձեռքբերված պատվաստանյութերը ունեն ԵՏՄ ապրանքի կարգավիճակ՝ ներմուծվել են ԵՏՄ անդամ պետությունից:

Նախարարության կարիքների համար հաստատվել է գնումների էլեկտրոնային համարարգի /ARMEPS/ միջոցով գնանշման հարցման ձևով գնումներ կատարելու ընթացակարգով «ՄԵԿ ծաղիկի, ԽԵԿ հանգուցավոր մաշկաբորբի ասոցացված կուլտուրալ, չոր, վիրուսային» /այսուհետ՝Ծաղիկ/ և «Խոզերի դասական ժանտախտի նկատմամբ կենդանի, չորացված պատվաստանյութ»-ի /այսուհետ՝ Ժանտախտ/ ձեռքբերման գնման հայտը: Ըստ գնման հայտի սահմանվել է ձեռք բերվող պատվաստանյութերի տեխնիկական բնութագրերը, միավորի գները, ընդհանուր գումարը և քանակը:

Գնահատող հանձնաժողովի 2019 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ 1 Արձանագրության համաձայն հաստատվել է ՀՀ ԷՆ-ԳՀԱՊՁԲ-19/44» ծածկագրով հրավերի տեքստը և հայտերի բացման օրը: Ըստ գնման հրավերի սույն գնման գործընթացը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի, 6-րդ մասի 2-րդ կետի համաձայն, այն է՝ «Ապրանքի մատակարարումը, աշխատանքի կատարումը կամ ծառայության մատուցումը պետք է սկսվի տվյալ գնման համար ֆինանսական միջոցներ նախատեսվելու պահից հաշված այնպիսի ժամկետում, որի ընթացքում գնման մրցակցային որևէ ձևի կիրառումը ժամկետի առումով անհնար է»:

Հայտերը բացվել են 2019 թվականի դեկտեմբերի 16-ին, գնային առաջարկներ են ներկայացրել «Ագաստ» ՍՊԸ-ն և «Կենդանիների առողջության պահպանման ֆեդերալ կենտրոն» ՖՊԲԿ-ն: «Ագաստ» ՍՊԸ-ն գնային առաջարկ է ներկայացրել երկու չափաբաժիններով՝ Ծաղիկ պատվաստանյութի համար՝ 58,806.31 հազ.դրամ /առանց ԱԱՀ/ և Ժանտախտ պատվաստանյութի համար՝ 14,617.35 հազ.դրամ /առանց ԱԱՀ/: Պետք է նշել, որ գնման հայտով ծաղիկ

պատվաստանյութի համար սահմանվել է գին /նախահաշվային գին/՝ 45,235.62 հազ.դրամ և Խոզերի ժանտախտ պատվաստանյութի համար՝ 11,073.75 հազ.դրամ:

«Կենդանիների առողջության պահպանման ֆեդերալ կենտրոն» ՖՊԲԿ-ն գնային առաջարկ է ներկայացրել միայն Ծաղիկ պատվաստանյութի համար, առանց ԱԱՀ՝ նախահաշվային գնին հավասար: Հանձնաժողովի որոշման համաձայն կողմերը հրավիրվել են առաջարկված գնի նվազեցման շուրջ բանակցությունների: Համաձայն գնահատող հանձնաժողովի 2019 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 3 Արձանագրության՝ բանակցությունների արդյունքում, «Կենդանիների առողջության պահպանման ֆեդերալ կենտրոն» ՖՊԲԿ-ի գնային առաջարկը մնացել է անփոփոխ՝ 45,235.62 հազ.դրամ: «Ագաստ» ՍՊԸ-ի կողմից գնային առաջարկը Ծաղիկ պատվաստանյութի համար նվազեցվել է մինչև 45,597.51 հազ.դրամ, Խոզերի ժանտախտ պատվաստանյութի համար՝ 11,073.75 հազ.դրամ, որը հավասար է նախահաշվային գնին:

Ստորև աղյուսակում ներկայացվում է ՀՀ ԷՆ-ԳՀԱՊՁԲ-19/44» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքները.

Աղյուսակ 1

Հ/Հ	Պատվաստանյութի անվանումը	Գնման հայտով սահմանված գին	Գնային առաջարկներ			
			«Ագաստ» ՍՊԸ		«Կենդանիների առողջության պահպանման ֆեդերալ կենտրոն» ՖՊԲԿ	
			Գնային առաջարկներ	Բանակցությունների արդյունք	Գնային առաջարկներ	Բանակցությունների արդյունք
1	Ծաղիկ	45,235.62	58,806.31	45,597.51	45,235.62	45,235.62
2	Ժանտախտ	11,073.75	14,617.35	11,073.75	Չի ներկայացրել	Չի ներկայացրել

Այսպիսով, գնահատող հանձնաժողովը 1-ին չափաբաժնով՝ Ծաղիկ պատվաստանյութի համար հաղթող է ճանաչել «Կենդանիների առողջության

պահպանման ֆեդերալ կենտրոն» ՖՊԲԿ-ին: Իսկ 2-րդ չափաբաժնով՝ ժանտախտ պատվաստանյութի համար՝ «Ագաստ» ՍՊԸ-ին:

Նախարարության կողմից անասնաբուժական պատվաստանյութերի ներմուծումը մինչև 2020 թվականի հունվարի 1-ը ազատված է եղել ԱԱՀ-ից՝ համաձայն «Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ներմուծվող՝ ակցիզային հարկով հարկման ոչ ենթակա այն ապրանքների ցանկը հաստատելու մասին, որոնց ներմուծումն ազատված է ավելացված արժեքի հարկից» ՀՀ օրենքի /այսուհետ՝ ՀՕ-195/: 2019 թվականի հունիսի 25-ին վերոնշյալ օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասով կատարված փոփոխությամբ «կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի» բառերից առաջ լրացվել է «ավելացված արժեքի հարկ վճարող համարվող» բառերը: Արդյունքում, Նախարարության կողմից, անասնաբուժական պատվաստանյութերի ներմուծումը ենթակա է ԱԱՀ-ով հարկման:

«ՀՀ ԷՆ-ԳՀԱՊՁԲ-19/44» ծածկագրով անասնաբուժական պատվաստանյութերի ձեռքբերման համար Նախարարությունը մատակարարին պետք է վճարի 45,235.62 հազ.դրամ և ՀՀ պետական բյուջե պետք է վճարի 9,047.25 հազ. դրամ ԱԱՀ, համաձայն «Եվրասիական տնտեսական միության» պայմանագրի 72-րդ հոդվածի 1-ին մասով և ՀՀ Հարկային օրենսգրքի 61-րդ հոդվածի 3-մասի և 70-րդ հոդվածի 2-մասի: Այսպիսով, պայմանագրով սահմանված գումարը և Նախարարության կողմից ՀՀ պետական բյուջե վճարվելիք ԱԱՀ-ի գումարը միասին կազմում է 54,282.75 հազ.դրամ, որը ավելին է քան գնման հայտով Ծաղիկ պատվաստանյութի համար սահմանված գինը:

Միևնույն ժամանակ Նախարարության կողմից հրավերով նախատեսվել է այնպիսի նախահաշվային արժեք, որի մեջ ըստ էության ներառված չի եղել ԱԱՀ-ն, ինչի հետևանքով չի պահպանվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի պահանջները, այն է՝ «խտրական են և սահմանափակում են մրցակցությունը՝ անհիմն կերպով բարդացնում կամ պարզեցնում են հնարավոր մասնակցությունը գնման գործընթացին»: Վերոնշյալը հանգեցրել է ***անհամապատասխանության «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի պահանջների հետ, այն է՝ գնման գործընթացի միասնական***

կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում:

Առկա է անհամապատասխանություն, 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության թիվ 526-Ն /այսուհետ՝ Թիվ 526-Ն Որոշում/ որոշման 40—րդ կետի 5-րդ ենթակետի՝ «...Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում, կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գնման հայտով սահմանված գինը կամ գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա՝» ա) պարբերության մասով, այն է՝ «ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ...» և է) պարբերության մասով՝ «բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, եթե դրան ներկա մասնակիցների ներկայացրած գները գերազանցում են գնման հայտով սահմանված գինը կամ նվազագույն գները հավասար են, գնման ընթացակարգն օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա հայտարարվում է չկայացած...»:

Սակայն, հաշվի չառնելով այն հանգամանքը, որ գնային առաջարկը ՀՀ պետական բյուջե վճարվելիք ԱԱՀ-ի հետ միասին գերազանցում է գնման հայտով սահմանված գինը, 2020 թվականի հունվարի 24-ին նախարարության և «Կենդանիների առողջության պահպանման ֆեդերալ կենտրոն» ՖՊԲԿ-ի միջև կնքվել է պետության կարիքների համար անասնաբուժության մեջ կիրառվող պատվաստանյութերի մատակարարման թիվ «ՀՀ ԷՆ-ԳՀԱՊՁԲ-19/44» պայմանագիրը, ընդհանուր գումարով՝ 45,235.62 հազ. դրամ:

Պայմանագրով նախատեսված 3,618,850 մլ Ծաղիկ պատվաստանյութը «Կենդանիների առողջության պահպանման ֆեդերալ կենտրոն» ՖՊԲԿ-ի թիվ 001481 հաշիվ-ապրանքագրով Նախարարությանը մատակարարվել է 2020

թվականի մարտի 13-ին, գումարով՝ 45,235.62 հազ.դրամ: Մատակարարված պատվաստանյութերը հանձնման-ընդունման ակտով ՀԱԲԼԾԿ-ի պահեստ է մուտքագրվել 2020 թվականի մարտի 18-ին:

2020 թվականի մարտ ամսին ՌԴ-ից ՀՀ ներմուծված 45,235,62 հազ.դրամ ընդհանուր արժողությամբ պատվաստանյութերի վերաբերյալ 2020 թվականի մարտի 17-ին I2020-RUZVQLL8 ներմուծման գործարքով Նախարարության կողմից հարկային մարմին է ներկայացվել ներմուծման հարկային հայտարարագիր և ապրանքների ներմուծման և անուղղակի հարկերի վճարման /կամ անուղղակի հարկերից ազատման, անուղղակի հարկերն այլ կարգով վճարելու/ մասին հայտարարություն: Նախարարության կողմից կիրառվել է արտոնություն և չի հաշվարկվել 9,047,12 հազ.դրամ ԱԱՀ միասնական ապրանքային անվանացանկի՝ 3002300000 ծածկագրով ապրանքների 45,235.62 հազ.դրամ հարկման բազայի նկատմամբ:

Առկա է անհամապատասխանություն ՀՕ-195 օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջի մասով՝ անասնաբուժական պատվաստանյութերի ներմուծման գործարքի համար ԱԱՀ-ից ազատման արտոնությունը կիրառելի չէ, հետևաբար Նախարարության կողմից անասնաբուժական պատվաստանյութերի ներմուծումը ենթակա է ԱԱՀ-ով հարկման:

Հարկ է նշել, որ ***ՀՕ-195-ում կատարված վերոնշյալ փոփոխության վերաբերյալ*** 2020 թվականի մայիսի 21-ին Նախարարությունը տեղեկացվել է ՀՀ ՊԵԿ հարկային տեղեկատվության և ռիսկերի վերլուծության վարչության կողմից արձանագրությամբ, որում նշվում է, որ Նախարարության կողմից ՀՀ տարածք ներմուծված 3002300000 ԱՏԳ ԱԱ ապրանքային դիրքին դասակարգվող ապրանքների ներմուծման գործարքի համար ԱԱՀ-ից ազատման արտոնությունը կիրառելի չէ ՀՕ- 195 օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ 2020 թվականի հունվարի 1-ի դրությամբ: Հետևաբար ներմուծման հարկային հայտարարագրում վերոնշյալ ԱՏԳ ԱԱ ապրանքային դիրքին դասակարգվող ապրանքների ներմուծումը ենթակա է ԱԱՀ-ով հարկման ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված կարգով, և այդ ապրանքատեսակների համար պետք է հաշվարկվի 9,047.12 հազ.դրամ ԱԱՀ գումար:

Քանի որ ներմուծվել է 3,618,850 մլ Ծաղիկ պատվաստանյութ, որի համար վճարվել է 54,282.75 հազ.դրամ, հետևաբար 1 մլ պատվաստանյութի համար ծախսվել է 15 դրամ, սակայն Նախարարության կողմից այն հաշվետվություններով ներկայացվել է հաշվապահորեն հաշվառված է 12.5 դրամ աշրժեքով:

Եզրակացություն

2019 թվականի հունիսի 25-ին ՀՕ-195 օրենքում կատարված փոփոխությամբ անասնաբուժական պատվաստանյութերի ներմուծումը ենթակա է ԱԱՀ-ով հարկման: Հետևաբար ***«ՀՀ ԷՆ-ԳՀԱՊՁԲ-19/44» ծածկագրով*** անասնաբուժական պատվաստանյութի ձեռքբերման համար մատակարարին վճարման ենթակա գումարը ՀՀ պետական բյուջե վճարվելիք ԱԱՀ-ի հետ միասին կազմում է 54,282.75 հազ.դրամ, որը ավելին է քան գնման հայտով Ծաղիկ պատվաստանյութի համար սահմանված գինը: Արդյունքում, առկա է անհամապատասխանություն ***ՀՀ կառավարության*** 04.05.2017թ. ***թիվ 526-Ն որոշման 40—րդ կետի 5-րդ ենթակետի ա/ և է/ պարբերությունների մասով՝ մրցույթը պետք է համարվեր չկայացած, քանի որ նշված ներմուծման գործարքի համար ԱԱՀ-ից ազատման արտոնությունը կիրառելի չէր:***

2. ՀՀ ԷՆ ԲՄԱՊՁԲ-19/1 ծածկագրով /չկայացած/ գնման ընթացակարգի վերաբերյալ

Առկա է անհամապատասխանություն Թիվ 526-Ն Որոշման 40—րդ կետի 5-րդ ենթակետի ա/ և է/ պարբերությունների մասով:

Նախարարության կարիքների համար հաստատվել է գնումների էլեկտրոնային համակարգի /ARMEPS/ միջոցով բաց մրցույթի ձևով գնումներ կատարելու ընթացակարգով «Կենդանիների դաբաղ հիվանդության նկատմամբ՝ բազմավալենտ, սորբինացված, կուլտուրալ, ակտիվազրկված պատվաստանյութ դաբաղի վիրուսի A Իրան 2005 և AG-VII, O Պան Ասիա-2, Ասիա 1, Sindh-08 տիպերի դեմ պատվաստանյութի» /այսուհետ՝ Դաբաղ/ ձեռքբերման գնման հայտը: Ըստ գնման հայտի սահմանվել է ձեռք բերվող պատվաստանյութերի տեխնիկական

բնութագրերը, միավորի գները, ընդհանուր գումարը և քանակը: Գնման հայտով նախահաշվային գինը սահմանվել է 226,272.50 հազ. դրամ:

Գնահատող հանձնաժողովի 2019 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ 1 Արձանագրության համաձայն հաստատվել է «ՀՀ ԷՆ-ԲՄԱՊՁԲ-19/1» ծածկագրով հրավերի տեքստը և հայտերի բացման օրը: Ըստ գնման հրավերի սույն գնման գործընթացը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի, 6-րդ մասի 2-րդ կետի համաձայն, այն է՝ «Ապրանքի մատակարարումը, աշխատանքի կատարումը կամ ծառայության մատուցումը պետք է սկսվի տվյալ գնման համար ֆինանսական միջոցներ նախատեսվելու պահից հաշված այնպիսի ժամկետում, որի ընթացքում գնման մրցակցային որևէ ձևի կիրառումը ժամկետի առումով անհնար է»:

Հայտերը բացվել են 2019 թվականի դեկտեմբերի 16-ին, գնային առաջարկներ են ներկայացրել ՌԴ երկու կազմակերպություն՝ «Սկիֆ Ագրոս» ՍՊԸ-ն և «Կենդանիների առողջության պահպանման ֆեդերալ կենտրոն» ՖՊԲԿ-ն: Վերջինս հանդիսանում է պատվաստանյութի արտադրողը: Երկու մասնակիցները ներկայացրել են նույն գումարի չափով գնային առաջարկներ՝ 226,272.50 հազ. դրամ /առանց ԱԱՀ/, որը հավասար է եղել գնման հայտով սահմանված գնին /նախահաշվային գին/:

Թիվ 526-Ն Որոշմամբ հաստատված կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն կողմերը հրավիրվել են առաջարկված գնի նվազեցման շուրջ բանակցությունների: Արդյունքում «Կենդանիների առողջության պահպանման ֆեդերալ կենտրոն» ՖՊԲԿ-ն գնային առաջարկը նվազեցվել է և կազմել է 224,009.77 հազ.դրամ, իսկ «Սկիֆ Ագրոս» ՍՊԸ -ի կողմից առաջարկվել է 222,371.25 հազ.դրամ:

Ստորև աղյուսակում ներկայացվում է «ՀՀ ԷՆ-ԲՄԱՊՁԲ-19/1» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքները.

Աղյուսակ 2, հազ.դրամ

Հ/	Պատվաստ	Գնման	Գնային առաջարկներ

Հ	անյութի անվանումը	հայտով սահմանված գին	«Սկիֆ Ագրոս» ՍՊԸ		«Կենդանիների առողջության պահպանման ֆեդերալ կենտրոն» ՖՊԲԿ	
			Գնային առաջարկներ	Բանակցությունների արդյունք	Գնային առաջարկներ	Բանակցությունների արդյունք
1	Դաբաղ	226,272.50	226,272.50	222,371.25	226,272.50	224,009.77

Այսպիսով, գնահատող հանձնաժողովը Դաբաղի պատվաստանյութի գնման համար հաղթող է ճանաչել «Սկիֆ Ագրոս» ՍՊԸ-ին: Արդյունքում, 2020 թվականի փետրվարի 28-ին Նախարարության և «Սկիֆ Ագրոս» ՍՊԸ-ի միջև կնքվել է պայմանագիր, այնուհետև «Գնումների մասին» ՀՀ օրենքին համապատասխան 2020 թվականի ապրիլի 1-ին մատակարարի հետ կնքվել է համաձայնագիր, որով սահմանվել է մատակարարման ժամկետ՝ 2020 թվականի մայիս ամիսը:

Ինչպես արդեն ներկայացվել է «ՀՀ ԷՆ-ԳՀԱՊՁԲ-19/44» ծածկագրով գնման ընթացակարգի նկարագրությունը Նախարարության կողմից Դաբաղ պատվաստանյութի ներմուծումը 2020 թվականի հունվարի 1-ից ենթակա է ԱԱՀ-ով հարկման, համաձայն՝ ՀՕ-195:

«ՀՀ ԷՆ-ԲՄԱՊՁԲ-19/1» ծածկագրով անասնաբուժական պատվաստանյութերի ձեռքբերման համար Նախարարությունը մատակարարին պետք է վճարի 222,371.25 հազ.դրամ և ՀՀ պետական բյուջե պետք է վճարի 44,474.25 հազ. դրամ ԱԱՀ, համաձայն «Եվրասիական տնտեսական միության» պայմանագրի 72-րդ հոդվածի 1-ին մասով և ՀՀ Հարկային օրենսգրքի 61-րդ հոդվածի 3-մասի և 70-րդ հոդվածի 2-մասի: Այսպիսով, պայմանագրով սահմանված գումարը և Նախարարության կողմից ՀՀ պետական բյուջե վճարվելիք ԱԱՀ-ի գումարը միասին կազմում է 266,845.50 հազ.դրամ, որը ավելին է քան գնման հայտով Դաբաղ պատվաստանյութի համար սահմանված գինը:

Միևնույն ժամանակ Նախարարության կողմից հրավերով նախատեսվել է այնպիսի նախահաշվային արժեք, որի մեջ ըստ էության ներառված չի եղել ԱԱՀ-ն,

ինչի հետևանքով չի պահպանվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի պահանջները, այն է՝ «խտրական են և սահմանափակում են մրցակցությունը՝ անհիմն կերպով բարդացնում կամ պարզեցնում են հնարավոր մասնակցությունը գնման գործընթացին»: Վերոնշյալը հանգեցրել է ***անհամապատասխանության «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի պահանջների հետ, այն է՝ գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում:***

Առկա է անհամապատասխանություն, 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության թիվ 526-Ն /այսուհետ՝ Թիվ 526-Ն Որոշում/ որոշման 40—րդ կետի 5-րդ ենթակետի՝ «...Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում, կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գնման հայտով սահմանված գինը կամ գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա՝» ա) պարբերության մասով, այն է՝ «ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ...» և է) պարբերության մասով՝ «բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, եթե դրան ներկա մասնակիցների ներկայացրած գները գերազանցում են գնման հայտով սահմանված գինը կամ նվազագույն գները հավասար են, գնման ընթացակարգն օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա հայտարարվում է չկայացած...»:

Այսպիսով, Նախարարությունը հաշվի չառնելով այն հանգամանքը, որ ներկայացված գնայաին առաջարկը ՀՀ պետական բյուջե վճարվելիք ԱԱՀ-ի հետ միասին գերզանցում է գնման հայտով սահմանված գինը այնուամենայնիվ 2020 թվականի փետրվարի 28-ին «Սկիֆ Ագրոս» ՍՊԸ-ի հետ կնքել է պետության կարիքների համար անասնաբուժության մեջ կիրառվող պատվաստանյութերի

մատակարարման թիվ «ՀՀ ԷՆ-ԲՄԱՊՁԲ-19/1» պայմանագիրը: Պայմանագրի գինը կազմել է 222.371.25 հազ. դրամ, որի մեջ ներառված չէ ԱԱՀ-ի գումարը:

Եզրակացություն

2019 թվականի հունիսի 25-ին ՀՕ-195 օրենքում կատարված փոփոխությամբ Նախարարության կողմից անասնաբուժական պատվաստանյութերի ներմուծումը ենթակա է ԱԱՀ-ով հարկման: Հետևաբար ***«ՀՀ ԷՆ-ԲՄԱՊՁԲ-19/1» ծածկագրով*** անասնաբուժական պատվաստանյութի ձեռքբերման համար մատակարարին վճարման ենթակա գումարը ՀՀ պետական բյուջե վճարվելիք ԱԱՀ-ի հետ միասին կազմում է 266,845.50 հազ.դրամ, որը ավելին է քան գնման հայտով Դաբաղ պատվաստանյութի համար սահմանված գինը: Արդյունքում, առկա է անհամապատասխանություն ***ՀՀ կառավարության*** 04.05.2017թ. ***թիվ 526-Ն որոշման 40—րդ կետի 5-րդ ենթակետի ա/ և է/ պարբերությունների մասով՝ մրցույթը պետք է համարվեր չկայացած, քանի որ նշված ներմուծման գործարքի համար ԱԱՀ-ից ազատման արտոնությունը կիրառելի չէր:***

3. ՀՀ ԷՆ ԲՄԱՊՁԲ-19/1 ծածկագրով կնքված պայմանագրի ապրանքի մատակարարման ժամկետների փոփոխության վերաբերյալ

Առկա է անհամապատասխանություն Թիվ 526-Ն Որոշման 56-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված պահանջների մասով:

Առկա է անհամապատասխանություն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 468-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջների հետ:

Պայմանագրով Դաբաղ պատվաստանյութը պետք է մատակարարվեր մինչև 2020 թվականի մայիսի 31-ը, սակայն մատակարարումը սահմանված ժամկետներում չի իրականացվել և «Սկիֆ Ագրոս» ՍՊԸ-ն իր 2020 թվականի հունիսի 2-ի գրությամբ խնդրել է Նախարարությանը ապրանքի մատակարարման ժամկետը երկարաձգել մինչև 23.06.2020թ:

Այսպիսով, «Սկիֆ Ագրոս» ՍՊԸ–ն Նախարարությանը պետք է դիմեր պայմանագրային ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացույցային օր առաջ, սակայն

դիմել է պայմանագրային ժամկետը լրանալուց երկու օր հետո, որն ընդունվել է Նախարարության կողմից: ***Առկա է անհամապատասխանություն Թիվ 526-Ն Որոշման 56-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված պահանջների մասով, այն է՝ «.....սույն ենթակետում նախատեսված ժամկետը կարող է երկարաձգվել՝ մինչև պայմանագրով ի սկզբանե սահմանված ժամկետը լրանալը՝ պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը, իսկ առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ»:***

Նախարարության գլխավոր քարտուղարը թիվ 09.5.2/8010-2020 պատասխան գրությամբ «Սկիֆ Ագրոս» ՍՊԸ-ից պահանջել է մինչև 2020 թվականի հունիսի 23-ը ապրանք մատակարարելու վերաբերյալ հավաստում ներկայացնել, ինչպես նաև տեղեկացրել է, որ նշված ժամկետում ապրանքը չմատակարարելու դեպքում կկիրառվեն պայմանագրով նախատեսված տույժ-տուգանքներ: Համաձայն պայմանագրի 6.2 կետի վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 տոկոսի չափով՝ օրական 111.18 հազ դրամ, ինչը ամսական կտրվածքով կազմում է՝ 2,445.96 /111.18 *22/ հազ.դրամ:

Այսպիով, Նախարարության կողմից «Սկիֆ Ագրոս» ՍՊԸ-ին թույլատրվել է ապրանքի մատակարարման ժամկետը երկարացնել մինչև 2020 թվականի հունիսի 23-ը, սակայն Նախարարության կողմից լրացուցիչ համաձայնագիր չի կնքվել և հետևաբար չի կատարել բանկային երաշխիքների ժամկետների երկարացում:

Այսպիսով, քանի որ կատարվել է պայմանագրի պայմանների փոփոխություն /ապրանքների մատակարարման ժամկետների փոփոխություն/, հետևաբար ***առկա է անհամապատասխանություն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 468-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջով, այն է՝ «Պայմանագրի փոփոխման կամ լուծման համաձայնությունը կնքվում է այն ձևով, ինչով պայմանագիրը, եթե այլ բան չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պայմանագրից կամ գործարար շրջանառության սովորույթներից»:***

Եզրակացություն

Սկիֆ Ագրոս» ՍՊԸ–ն պայմանագրի ժամկետի երկարացման համար Նախարարությանը պետք է դիմեր պայմանագրային ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացույցային օր առաջ, սակայն դիմել է այն լրանալուց երկու օր հետո: ***Առկա է անհամապատասխանություն Թիվ 526-Ն Որոշման 56-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված պահանջների մասով: Քանի որ,*** «Սկիֆ Ագրոս» ՍՊԸ-ի խնդրանքը՝ պայմանագրի ժամկետի երկարացման վերաբերյալ Նախարարության կողմից ընդունվել է, հետևաբար պետք է կնքվեր լրացուցիչ համաձայնագիր պայմանագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ, ***սակայն չի կատարվել: Առկա է անհամապատասխանություն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 468-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջով***:

4. ՀՀ ԷՆ ԲՄԱՊՁԲ-19/1 ծածկագրով կնքված գնման պայմանագրի միակողմանի լուծման վերաբերյալ

Առկա է անհամապատասխանություն Թիվ 526-Ն Որոշման 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված պահանջների մասով:

Համաձայն կնքված պայմանագրի 2.1.7 ենթակետի գնորդը կարող է պայմանագիրը լուծել, եթե վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը և այն էական է համարվում եթե՝

ա/ մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել գնորդի համար ընդունելի ժամկետում

բ/ ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ապրանքի մատակարարման ժամկետի երկարաձգման համար լրացուցիչ համաձայնագիր չի կնքվել, հետևաբար պայմանագրով ապրանքի մատակարարման վերջնաժամկետը սահմանվել է մինչև 31.05.2020թ: Պայմանագրով ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել ևս 30 օր՝ տույժերի վճարման պայմանով: Նշված ժամկետի լրանալուց հետո միայն Նախարարությունը կարող էր միակողմանի լուծել պայմանագիրը՝ կնքված պայմանագրի 8.9 կետով սահմանված պահանջներին համապատասխան,

այն է՝ «Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում, նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկում է նաև վաճառողի էլեկտրոնային փոստին»:

Նախարարությունը 2020 թվականի հուլիսի 3-ի թիվ 09.18.11/9449-2020 գրությամբ տեղեկացրել է «Սկիֆ Ագրոս» ՍՊԸ-ին գնման պայմանագիրը միակողմանի լուծելու մասին: ***Առկա է անհամապատասխանություն Թիվ 526-Ն Որոշման 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված՝ «պայմանագրի միակողմանի լուծման մասին հայտարարության» փոխարեն 2020 թվականի հուլիսի 2-ին տեղեկագրում հրապարակել է «կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին հայտարարություն», որում որպես փոփոխության առաջացման պատճառ նշվել է պայմանագրի միակողմանի լուծարումը: Ընդ որում հրապարակված հայտարարության ռուսերեն թարգմանված տարբերակում նշված է «оценочная комиссия процедуры», այն է «Ընթացակարգի գնահատող հանձնաժողով» մինչդեռ՝ համաձայն Թիվ 526-Ն Որոշման կարգի 29-րդ կետի՝ պայմանագիրը կնքելու օրվան հաջորդող օրը հանձնաժողովը համարվում է լուծարված:***

Նախարարության 2020 թվականի հունիսի 25-ի թիվ 09.18.11/9065-2020 և հուլիսի 7-ի թիվ 09/9532-2020 գրությունների հիման վրա ՀՀ ֆինանսների նախարարությունը նախաձեռնել է «Սկիֆ Ագրոս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ: Պետք է նշել, որ Նախարարությունը նախաձեռնել է «Սկիֆ Ագրոս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգը, մինչդեռ վերջինիս հետ 25.06.2020թ. դրությամբ պայմանգիրը լուծված չի եղել: ՀՀ գնումների հետ կապված բողոքներ

քննող անձը որոշում է կայացրել, որ «Սկիֆ Ագրոս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ոսումնասիրությամբ պարզվել է, որ պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Նախարարությունը հրապարակել է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում 2020 թվականի սեպտեմբերի 14-ին:

Եզրակացություն

ՀՀ ԷՆ ԲՄԱՊՁԲ-19/1 ծածկագրով գնման ընթացակարգով կնքված պայմանագրի 2.1.7 ենթակետի գնորդը կարող է պայմանագիրը լուծել, եթե վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը՝ ապրանքի մատակարարման ժամկետները 30 օրից ավելի խախտելու դեպքում: Նշված ժամկետի լրանալուց հետո միայն Նախարարությունը կարող էր միակողմանի լուծել պայմանագիրը՝ կնքված պայմանագրի 8.9 կետով սահմանված պահանջներին համապատասխան՝ վաճառողին պատշաճ ծանուցելուց հետո: Սակայն Նախարարությունը մատակարարին պատշաճ չի ծանուցել և սկսել է պայմանագրի լուծման գործընթացը: ***Առկա է անհամապատասխանություն Թիվ 526-Ն Որոշման 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված պահանջների մասով: Նշված հիմքերով*** ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը որոշում է կայացրել «Սկիֆ Ագրոս» ՍՊԸ-ին չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

5. ՀՀ ԷՆ ԲՄԱՊՁԲ-19/1 ծածկագրով գնման ընթացակարգի բանկային երաշխիքների /որակավորման ապահովում և պայմանագրի ապահովում/ վերաբերյալ

Առկա է անհամապատասխանություն ներկայացված բանկային երաշխիքների և ՀՀ ԷՆ ԲՄԱՊՁԲ-19/1 ծածկագրով բաց մրցույթի հրավերով նախատեսված հավելված 4-ի և հավելված 5-ի 5-րդ կետերի պահանջների մասով:

«Սկիֆ Ագրոս» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է որակավորման ապահովում՝ 35,000.00 հազ.ՌԴ ռուբլի և պայմանագրի ապահովում՝ 3,500.00 հազ.ՌԴ ռուբլի /այսուհետ՝ բանկային երաշխիքներ/: Բանկային երաշխիքների վերջնաժամկետ է սահմանվել 2020 թվականի հունիսի 26-ը:

Քանի որ բանկային երաշխիքները ուժի մեջ են մտնում 01.04.2020թ.-ից և գործում է միջև 26.06.2020 թ.-ը, որից հետո այն ուժը կորցրած է ճանաչվում, հետևաբար առկա է անհամապատասխանություն ներկայացված բանկային երաշխիքների և ՀՀ ԷՆ ԲՄԱՊՁԲ-19/1 ծածկագրով բաց մրցույթի հրավերով նախատեսված հավելված 4-ի և հավելված 5-ի 5-րդ կետերի պահանջների մասով, այն է՝ «Երաշխիքը գործում է բենեֆիցիարի և պրինցիպալի միջև թիվ ՀՀ ԷՆ ԲՄԱՊՁԲ-19/1 ծածկագրով կնքված պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև բենեֆիցիարի կողմից պայմանագրի կատարման արդյունքը ամբողջական ընդունվելու օրվան հաջորդող 20-րդ աշխատանքային օրը ներառյալ»:

«ՀՀ ԷՆ-ԲՄԱՊՁԲ-19/1» ծածկագրով կնքված պայմանագրով ձեռքբերված ապրանքի մատակարարման ժամկետը սահմանվել է մինչև 2020 թվականի հունիսի 23-ը, իսկ բանկային երաշխիքների ժամկետները՝ 2020 թվականի հունիսի 26-ը: 2020 թվականի հունիսի 24-ին և 25-ին գրություններով ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը դիմել է ՌԴ «Ցենտր ինվեստ» բանկ պայմանագրի ապահովման և որակի ապահովման բանկային երաշխիքներով սահմանված 267,190.00 հազ. դրամ գումարը գանձապետական հաշվին փոխանցելու համար:

2020 թվականի հունիսի 24-ին և 25-ին Նախարարության կողմից ՌԴ «Ցենտր ինվեստ» բանկին գումարի ստացման պահանջ չէր կարող ներկայացվել, քանի որ նշված օրերին դեռևս պայմանագիրը լուծված չէր և թիվ 526-Ն Որոշման կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետով սահմանված պահանջները կիրառելի չեն Նախարարության համար, քանի որ որակավորման ապահովումը չի վերադարձվում այն ներկայացրած անձին, եթե վերջինս խախտել է

պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Պետք է նշել, որ բանկային երաշխիքների ժամկետները լրանալուց հետո «Ցենտր ինվեստ» բանկը ի պատասխան վերոնշյալ գրությունների տեղեկացրել է, որ ներկայացված պահանջներով 35,000.00 ***հազ. ՌԴ ռուբլի*** և 3,500.00 ***հազ. ՌԴ ռուբլի*** չեն կարող փոխանցվել նշված հաշվին, քանի որ բանկային երաշխիք Հաստատողի և Պահանջողի լիազորությունները չեն համընկնում / այսինքն՝ Պահանջողն ու Հաստատողը նույն անձիք չեն/, ինչպես նաև չի պահպանվել բանկային երաշխիքների պահանջի ներկայացման ձևը, ինչն անհնար է դարձրել բանկային երաշխիքների վճարումը:

Նախարարությունը 2020 թվականի օգոստոսի 12-ի թիվ 09.18.11/11492-2020 գրությամբ բանկային երաշխիքը լրանալուց մոտ մեկ ամիս անց «Ցենտր ինվեստ» բանկին տեղեկացնում է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի և Թիվ 526-Ն Որոշմամբ հաստատված կարգի 5-րդ և 6-րդ կետերի համաձայն պատվիրատուի ղեկավար է համարվում Նախարարության գլխավոր քարտուղարը, որը ունի դրամական միջոցների վճարումը պահանջելու լիազորություններ:

Եզրակացություն

Մրցույթի հրավերով սահմանվել է, որ բանկային երաշխիքը գործում է բենեֆիցիարի և պրինցիպալի միջև կնքված պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև բենեֆիցիարի կողմից պայմանագրի կատարման արդյունքը ամբողջական ընդունվելու օրվան հաջորդող 20-րդ աշխատանքային օրը ներառյալ: Սակայն Բանկային երաշխիքների վերջնաժամկետ է սահմանվել 2020 թվականի հունիսի 26-ը: ***Քանի որ բանկային երաշխիքները ուժի մեջ են մտնում 01.04.2020թ.-ից և գործում է միջև 26.06.2020 թ-ը, որից հետո այն ուժը կորցրած է ճանաչվում, հետևաբար ոչա է անհամապատասխանություն ներկայացված բանկային երաշխիքների և ՀՀ ԷՆ ԲՄԱՊՁԲ-19/1 ծածկագրով բաց մրցույթի հրավերով նախատեսված հավելված 4-ի և հավելված 5-ի 5-րդ կետերի պահանջների մասով:***

ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը 2020 թվականի հունիսի 24-ին և 25-ին դիմել է ՌԴ «Ցենտր ինվեստ» բանկ /պայմանագրային ժամկետը չլրացած/ պայմանագրի

ապահովման և որակի ապահովման բանկային երաշխիքներով սահմանված 267,190.00 հազ. դրամ գումարը գանձապետական հաշվին փոխանցելու համար, սակայն Նախարարության կողմից բանկային երաշխիքների ստացման պահանջ չէր կարող ներկայացվել, քանի որ նշված օրերին դեռևս պայմանագիրը լուծված չէր և թիվ 526-Ն Որոշման կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետով սահմանված պահանջները կիրառելի չեն Նախարարության համար: Բանկային երաշխիքների ժամկետները լրանալուց հետո «Ցենտր ինվեստ» բանկը տեղեկացրել է, որ բանկային երաշխիք Հաստատողի և Պահանջողի լիազորությունները չեն համընկնում / այսինքն՝ Պահանջողն ու Հաստատողը նույն անձիք չեն/, ինչպես նաև չի պահպանվել բանկային երաշխիքների պահանջի ներկայացման ձևը, ինչն անհնար է դարձրել բանկային երաշխիքների վճարումը: ***Հաշվի առնելով նշված անհամապատասխանությունները, ինչպես նաև հսկողության գործընթացի թերացումները ՀՀ պետական բյուջե չի ստացվել բանկային երաշխիքներով նախատեսված ֆինանսական միջոցները՝ 38,500.00 հազ. ՌԴ ռուբլի:***

III. ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

6. ԷՆ-ԲՄԱՊՁԲ-19/1» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում ՌԴ «Ցենտր ինվեստ» բանկից բանկային երաշխիքներով սահմանված գումարների ստացման վերաբերյալ

Առկա է խեղաթյուրում ՀՀ պետական բյուջե չստացված բանկային երաշխիքներով նախատեսված 267,000.00 հազ. դրամ գումարի չափով:

«ՀՀ ԷՆ-ԲՄԱՊՁԲ-19/1» ծածկագրով կնքված պայմանագրով ձեռքբերված ապրանքի մատակարարման ժամկետը սահմանվել է մինչև 2020 թվականի հունիսի 23-ը, իսկ բանկային երաշխիքների ժամկետները՝ 2020 թվականի հունիսի 26-ը: 2020 թվականի հունիսի 24-ին և 25-ին գրություններով ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը դիմել է ՌԴ «Ցենտր ինվեստ» բանկ պայմանագրի ապահովման և որակի ապահովման բանկային երաշխիքներով սահմանված 267,190.00 հազ. դրամ գումարը գանձապետական հաշվին փոխանցելու համար:

2020 թվականի հունիսի 24-ին և 25-ին Նախարարության կողմից ՌԴ «Ցենտր ինվեստ» բանկին գումարի ստացման պահանջ չէր կարող ներկայացվել, քանի որ նշված օրերին դեռևս պայմանագիրը լուծված չէր և թիվ 526-Ն Որոշման կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետով սահմանված պահանջները կիրառելի չեն Նախարարության համար, քանի որ որակավորման ապահովումը չի վերադարձվում այն ներկայացրած անձին, եթե վերջինս խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Պետք է նշել, որ բանկային երաշխիքների ժամկետները լրանալուց հետո «Ցենտր ինվեստ» բանկը ի պատասխան վերոնշյալ գրությունների տեղեկացրել է, որ ներկայացված պահանջներով 35,000.00 ՌԴ հազ. ռուբլի և 3,500.00 ՌԴ հազ. ռուբլի չեն կարող փոխանցվել նշված հաշվին, քանի որ բանկային երաշխիք Հաստատողի

և Պահանջողի լիազորությունները չեն համընկնում / այսինքն՝ Պահանջողն ու Հաստատողը նույն անձիք չեն/, ինչպես նաև չի պահպանվել բանկային երաշխիքների պահանջի ներկայացման ձևը, ինչն անհնար է դարձրել բանկային երաշխիքների վճարումը:

Նախարարությունը 2020 թվականի օգոստոսի 12-ի թիվ 09.18.11/11492-2020 գրությամբ բանկային երաշխիքը լրանալուց մոտ մեկ ամիս անց «Ցենտր ինվեստ» բանկին տեղեկացնում է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի և Թիվ 526-Ն Որոշմամբ հաստատված կարգի 5-րդ և 6-րդ կետերի համաձայն պատվիրատուի ղեկավար է համարվում Նախարարության գլխավոր քարտուղարը, որը ունի դրամական միջոցների վճարումը պահանջելու լիազորություններ:

Եզրակացություն

ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը 2020 թվականի հունիսի 24-ին և 25-ին դիմել է ՌԴ «Ցենտր ինվեստ» բանկ /պայմանագրային ժամկետը չլրացած/ պայմանագրի ապահովման և որակի ապահովման բանկային երաշխիքներով սահմանված 267,190.00 հազ. դրամ գումարը գանձապետական հաշվին փոխանցելու համար, սակայն Նախարարության կողմից բանկային երաշխիքների ստացման պահանջ չէր կարող ներկայացվել, քանի որ նշված օրերին դեռևս պայմանագիրը լուծված չէր և թիվ 526-Ն Որոշման կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետով սահմանված պահանջները կիրառելի չեն Նախարարության համար: բանկային երաշխիքների ժամկետները լրանալուց հետո «Ցենտր ինվեստ» բանկը տեղեկացրել է, որ բանկային երաշխիք Հաստատողի և Պահանջողի լիազորությունները չեն համընկնում / այսինքն՝ Պահանջողն ու Հաստատողը նույն անձիք չեն/, ինչպես նաև չի պահպանվել բանկային երաշխիքների պահանջի ներկայացման ձևը, ինչն անհնար է դարձրել բանկային երաշխիքների վճարումը: ***Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև հսկողական գործընթացների թերացումները կապված բանկային երաշխիքների ստացման հետ, հանգեցրել են խեղաթյուրման 267,000.00 հազ. դրամ գումարի չափով և ՀՀ պետական բյուջե չի ստացվել բանկային երաշխիքներով նախատեսված ֆինանսական միջոցները:***

IV. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՄԲ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԱՅԼ ՓԱՍՏԵՐ

7. ՀՀ-ԷՆ-ՀՄԱՊՁԲ-20/50 ծածկագրով գնման ընթացակարգի վերաբերյալ

Նախարարությունը «Կենդանիների առողջության պահպանման ֆեդերալ կենտրոն» ՖՊԲԿ-ի կողմից 2020 թվականի հունիսի 26-ի թիվ 09-02/5677 գրությամբ տեղեկացվել է, որ վերջինիս և «Սկիֆ Ագրոս» ՍՊԸ-ի միջև կնքվել է Դաբաղ պատվաստանյութի մատակարարման պայմանագիր, որով պատվաստանյութը ենթակա է մատակարարման ՀՀ էկոնոմիկայի նախարարություն: Սակայն «Սկիֆ Ագրոս» ՍՊԸ-ի կողմից պատվաստանյութի համար դեռևս վճարում չի կատարվել:

Արդյունքում, «Կենդանիների առողջության պահպանման ֆեդերալ կենտրոն» ՖՊԲԿ-ը պատրաստակամություն է հայտնել անմիջական համագործակցություն Նախարարության հետ՝ Դաբաղ պատվաստանյութի մատակարարման մասով:

Այնուհետև Նախարարությունը նախաձեռնել է գործընթաց Դաբաղ պատվաստանյութը մեկ անձից գնում կատարելու համար: Արդյունքում 2020 թվականի հունիսի 29-ի թիվ 09.5.2/9058 գրությամբ Նախարարությունը դիմել է ՀՀ կառավարությանը՝ ներկայացնելով «ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1919-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և գնման գործընթաց կազմակերպելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, համաձայն որի ներկայացվել է հիմնավորում Դաբաղ պատվաստանյութի գնման անհետաձգելի պահանջի՝ մեկ անձից գնում կատարելու համար: Նախարարության կողմից ներկայացված հիմնավորումը ուսումնասիրվել է հաշվեքննողների կողմից և արձանագրվել են անհամապատասխանություններ: Մասնավորապես, հիմնավորմամբ ներկայացվել է, որ նախատեսվել է ձեռքբերել 3,121,000 մլ Դաբաղ պատվաստանյութ 71,25 դրամ միավորի արժեքով, սակայն չի նշվել, որ պատվաստանյութի գնման համար անհրաժեշտ է լրացուցիչ գումար ԱԱՀ վճարելու համար, քանի որ 2019 թվականի հունիսի 25-ին ՀՕ-195 օրենքի 1-ին հոդվածի 1-ին

մասում կատարված փոփոխությամբ Նախարարության կողմից անասնաբուժական պատվաստանյութերի ներմուծումը ենթակա է ԱԱՀ-ով հարկման: Հետևաբար, գնվող Դաբաղ պատվաստանյութի համար վճարվելիք ԱԱՀ-ի գծով նույնպես պետք է ներկայացվեր հիմնավորում, քանի որ, Նախարարությունը այդ մասով տեղեկացված էր նաև ՊԵԿ-ի կողմից 2020 թվականի մայիս ամսին՝ կապված Ծաղիկ պատվաստանյութի գնման հետ:

Ընդ որում պետք է նշել, որ մեկ անձից գնման գործընթացը նախաձեռնվել է ավելի շուտ, քան «Սկիֆ Ագրոս» ՍՊԸ-ի հետ կնքված պայմանագրի միակողմանի լուծումը, այսինքն ստացվում է այնպես, որ Դաբաղ պատվաստանյութի համար կնքված պայմանագիրը առանց լուծելու սկսվել է նոր պայմանագրի կնքման գործընթաց:

Հիմք ընդունելով 2020 թվականի հուլիսի 2-ի «ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1919-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և գնման գործընթաց կազմակերպելու մասին» թիվ 1146-Ն որոշումը, կազմակերպել է մեկ անձից գնման ՀՀ-ԷՆ-ՀՄԱՊՁԲ-20/50 ընթացակարգ՝ Դաբաղ պատվաստանյութ ձեռքբերելու համար: Պետք է նշել, որ Նախարարությունը հաշվի չառնելով այն հանգամանքը, որ գնային առաջարկը ՀՀ պետական բյուջե ԱԱՀ-ի հետ միասին գերազանցում է տվյալ պատվաստանյութի համար ֆինանսական միջոցները, սույն ընթացակարգով 2020 թվականի հուլիսի 22-ին կնքվել է ՀՀ-ԷՆ-ՀՄԱՊՁԲ-20/50-ծածկագրով պայմանագիր «Կենդանիների առողջության պահպանման ֆեդերալ կենտրոն» ՓՊԲԿ-ի հետ: Պայմանագրի գինը կազմել է 222,371.25 հազ.դրամ, որը հավասար է «Սկիֆ Ագրոս» ՍՊԸ-ի կողմից առաջարկված գնին:

Արդյունքում, 2020 թվականի օգոստոսի 10-ին ձեռք է բերվել 3,121,000 մլ պատվաստանյութ, գումարով՝ 222,371.25 հազ.դրամ: Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի՝ պայմանագրային գնի հաշվարկը պետք է ներառի տվյալ գնման պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերի, տուրքերի, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը, հետևաբար պայմանագրում պետք է նշվեր նաև ԱԱՀ-ի գումարը:

Այսպիսով, ՀՀ-ԷՆ-ՀՄԱԱՊՁԲ-20/50 անասնաբուժական պատվաստանյութերի ձեռքբերման համար Նախարարությունը մատակարարին պետք է վճարեր 222,371.25 հազ.դրամ և ՀՀ պետական բյուջե պետք է վճարեր 44,474.25 հազ.դրամ ԱԱՀ, համաձայն «Եվրասիական տնտեսական միության» պայմանագրի 72-րդ հոդվածի 1-ին մասով և ՀՀ հարկային օրենսգրքի 61-րդ հոդվածի 3-րդ մասի և 70-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն:

Վճարվելիք գումարը ԱԱՀ-ի հետ միասին կազմում է 266,845.50 հազ.դրամ, որը ավելին է քան «ՀՀ-ԷՆ-ՀՄԱԱՊՁԲ-20/50» ծածկագրով ձեռքբերվող պատվաստանյութի համար նախատեսված ֆինանսական միջոցները:

Քանի որ ներմուծվել է 3,121,000 մլ Դաբաղ պատվաստանյութ, որի համար վճարվել է 266,845.50 հազ.դրամ /այդ թվում՝ 44,474.25 հազ.դրամ ԱԱՀ/, հետևաբար 1 մլ պատվաստանյութի համար ծախսվել է 85,5 ՀՀ դրամ, սակայն այն Նախարարության կողմից հաշվետվություններով ներկայացվել է և հաշվապահորեն հաշվառված է 71,25 ՀՀ դրամ արժեքով:

Եզրակացություն

ՀՀ-ԷՆ-ՀՄԱԱՊՁԲ-20/50 ծածկագրով մեկ անձից Դաբաղ պատվաստանյութի *գնման գործընթացը նախաձեռնվել է ավելի շուտ, քան «Սկիֆ Ագրոս» ՍՊԸ-ի հետ կնքված պայմանագրի միակողմանի լուծումը, այսինքն ստացվում է այնպես, որ Դաբաղ պատվաստանյութի համար կնքված պայմանագիրը առանց լուծելու սկսվել է նոր պայմանագրի կնքման գործընթաց:* Նախարարությունը հաշվի չառնելով այն հանգամանքը, որ գնային առաջարկը ՀՀ պետական բյուջե ԱԱՀ-ի հետ միասին գերազանցում է տվյալ պատվաստանյութի համար ֆինանսական միջոցները «Կենդանիների առողջության պահպանման ֆեդերալ կենտրոն» ՖՊԲԿ-ի հետ կնքել է նոր պայմանագիր:

8. «ՀՀ ԷՆ-ԳՀԱՊՁԲ-19/44» և «ՀՀ-ԷՆ-ՀՄԱԱՊՁԲ-20/50» ծածկագրերով գնման գործընթացների արդյունքում առաջացած հարկային պարատավորությունների վերաբերյալ

«ՀՀ ԷՆ-ԳՀԱՊՁԲ-19/44» և «ՀՀ-ԷՆ-ՀՄԱԱՊՁԲ-20/50» ծածկագրերով գնման ընթացակարգերի արդյունքում Նախարարության կողմից Հայաստանի Հանրապետություն է ներմուծվել 45,235.62 հազ.դրամ և 222.371.25 հազ.դրամ ընդամենը՝ 267,606.87 հազ դրամի պատվաստանյութ, որի համար ՀՀ պետական բյուջե պետք է վճարվի ԱԱՀ 53,521.37 հազ.դրամ համաձայն «Եվրասիական տնտեսական միության» պայմանագրի 72-րդ հոդվածի 1-ին մասով և ՀՀ Հարկային օրենսգրքի 61-րդ հոդվածի 3-մասի և 70-րդ հոդվածի 2-մասի: Նշված ԱԱՀ-ի պարտավորությունը կրում է Նախարարությունը:

ԱԱՀ-ի վճարման համար Նախարարությունը հիմնավորում է ներկայացրել ՀՀ կառավարությանը հարկային պարտավորությունների մարման նպատակով լրացուցիչ ֆինանսական միջոցներ ներգրավման համար: ՀՀ կառավարության 2020 թվականի նոյեմբերի 26-ի թիվ 1877-Ն որոշմամբ Նախարարությանը հատկացվել է 55,500.00 հազ.դրամ՝ ԱԱՀ-ի մարման համար:

Այսպիսով, նշված պատվաստանյութերի ձեռքբերման համար Նախարարությունը լրացուցիչ վճարել է 55,500.00 հազ.դրամ ԱԱՀ / ներառյալ տույժերը/:

9. «ՀՀ ԷՆ-ԳՀԱՊՁԲ-19/46» ծածկագրով գնման գործընթացի վերաբերյալ

ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից «ՀՀ ԷՆ-ԳՀԱՊՁԲ-19/46» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը հայտարարվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետով՝ չորս չափաբաժիններով՝

սիբիրախտ, խշխշան պալար, թռչունների ժանտախտ, մեղուների վարրոատոզ: Գնային առաջարկներ են ներկայացրել «Ֆարմա-Ադամա» ՍՊԸ-ն և «Ագաստ» ՍՊԸ-ն: Հրավիրված բանակցությունների արդյունքում չորս չափաբաժիններով հաղթող է ճանաչվել «Ագաստ» ՍՊԸ-ն:

Վերոնշյալ չորս չափաբաժիններով 2020 թվականի փետրվարի 5-ին պատվաստանյութերի գնման համար Նախարարության և «Ագաստ» ՍՊԸ-ի միջև կնքվել է պայմանագիր: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-մասի 2-րդ կետի համաձայն ֆինանսական միջոցներ նախատեսվելուն պես «Ագաստ» ՍՊԸ-ն պետք է ներկայացներ պայմանագրի և որակավորման ապահովման բանկային երաշխիքները: Սակայն, նշված երաշխիքները համապատասխան ժամկետում վերջինիս կողմից չի ներկայացվել: Արդյունքում ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը միակողմանի լուծել է կնքված պայմանագիրը՝ հիմք ընդունելով 2020 թվականի փետրվարի 5-ին կնքված պայմանագրի 8.15 կետը՝ միաժամանակ տեղեկատվությունը հրապարակել է տեղեկագրում և 2020 թվականի մարտի 13-ին գրութամբ դիմել է Ֆինանսների նախարարություն: 2020 թվականի մարտի 17-ին Ֆինանսների նախարարությունը դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ «Ագաստ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից փաստերի քննման արդյունքում որոշվել է 2020 թվականի ապրիլի 21-ից «Ագաստ» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

10. «Ագաստ» ՍՊԸ-ից ձեռքբերված անասնաբուժության մեջ կիրառվող պատվաստանյութերի գնման ընթացակարգերի վերաբերյալ

2020 թվականի համար անասնաբուժության մեջ կիրառվող պատվաստանյութերի ձեռքբերման համար Նախարարության կողմից կազմակերպվել են թվով չորս գնման ընթացակարգ /«ՀՀ ԷՆ-ԳՀԱՊՁԲ-19/47», «ՀՀ ԷՆ-ԳՀԱՊՁԲ-19/44», «ՀՀ ԷՆ-ԳՀԱՊՁԲ-20/23» և «ՀՀ ԷՆ-ԳՀԱՊՁԲ-20/24»/, հինգ

չափաբաժիններով, այդ թվում ախտորոշիչ նյութեր՝ ռոզ-բենգալ, լեյկոզ, խոզերի դասական ժանտախտ, սիբիրախտ և խշխշան պալար: Վերոնշյալ բոլոր մրցույթներում հաղթող է ճանաչվել «Ագաստ» ՍՊԸ-ն, ընդ որում վերջինիս կողմից ներկայացված գնային առաջարկներում ապրանքների ինքնարժեքները հավասար են շահույթի գումարին, այսինքն կազմակերպության շահույթը գնային առաջարկում կազմել է 100%: «ՀՀ ԷՆ-ԳՀԱՊՁԲ-20/23» և «ՀՀ ԷՆ-ԳՀԱՊՁԲ-20/24»/ ծածկագրերով գնման ընթացակարգերով ձեռքբերված սիբիրախտի և խշխշան պալարի պատվաստանյութերը ներառված են եղել «ՀՀ ԷՆ-ԳՀԱՊՁԲ-19/46» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգում, որի շրջանակներում Նախարարության և «Ագաստ» ՍՊԸ-ն միջև կնքված պայմանագիրը Նախարարության կողմից միակողմանի լուծվել է և «Ագաստ» ՍՊԸ-ն ներառվել է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Վերոնշյալ չորս ընթացակարգերը իրականացվել են մինչ «Ագաստ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակում ընդգրկելը:

Հավելված

1116 Ծրագրի 11001 միջոցառման շրջանակներում Նախարարության կողմից ձեռքբերված առողջապահական և լաբորատոր նյութերի վերաբերյալ

Հազ.դրամ

Հ/Հ	Անունը կամ ապրանքային նշանը	Նախահաշվային Գին	Գնային Առաջարկ		Հաղթող կազմակերպության անվանումը	Մատակարարման ամսաթիվը	Քանակը	Գումարը /հազ.դրամ/	Ծանոթություն
			Մասնակից	Գումար					
ՀՀ ԷՆ-ԳՀԱՊՁԲ-19/47	Ռոզ-բենգալ բրուցելոզի ախտորոշման նյութ /մլ/	3,418.00	«Ագաստ» ՍՊԸ	3,588.90 Բանակցություն՝ 3,418.00	«Ագաստ» ՍՊԸ	14.02.2020թ	17,090	3,418.00	Բանակցություն
	Լեյկոզի ախտորոշիչ հավաքածու /մլ/	1,175.00	«Ագաստ» ՍՊԸ	700.00	«Ագաստ» ՍՊԸ	18.03.2020թ	7000	700.00	
			Սեդա Շբոյան Ա/Ձ	715.00					
ՀՀ ԷՆ-ԳՀԱՊՁԲ-19/44	Անանսնաբուժության մեջ կիրառվող խոզերի դասական ժանդախտի նկատմամբ կենդանի չորացված պատվաստանյու	11,073.80	«Ագաստ» ՍՊԸ	11,073.80	«Ագաստ» ՍՊԸ	18.03.2020թ	1,476,500	11,073.80	

	թ /մլ/								
ՀՀ ԷՆ-ԳՀԱՊՁԲ-19/44	ՄԵԿ ծաղիկի և ԽԵԿ հանգուցավոր մաշկաբորբի ասոցացված կուլտուրալ, չոր, վիրուսային պատվաստանյութ /մլ/	45,235.60	«Կենդանիների առողջության պահպանման ֆեդերալ կենտրոն» ՖՊԲԿ	45,235.60	«Կենդանիների առողջության պահպանման ֆեդերալ կենտրոն» ՖՊԲԿ	18.03.2020թ	3,618,850	45,235.60	
			«Ագաստ» ՍՊԸ	58,806.30 Բանակցություն՝ 45,597.50					
ՀՀ ԷՆ-ԳՀԱՊՁԲ-20/23	Կենդանիների հակասիբիրախտային 55 շտամի կենդանի, թուլացված չոր պատվաստանյութ /մլ/	9,223,87	«Ագաստ» ՍՊԸ	9,080.39	«Ագաստ» ՍՊԸ	17.04.2020թ	683,250	9,080.39	
ՀՀ ԷՆ-ԳՀԱՊՁԲ-20/2	Քլորակիր	550,0	«Յունիքիմ» ՍՊԸ	686.40					Չկայացած
			ԹԱԳ ՀԷՄ ՍՊԸ	1,500.00					
	Կաուստիկ սոդա /կգ/	480,0	«Յունիքիմ» ՍՊԸ	270.00	«Յունիքիմ» ՍՊԸ	21.04.2020թ	1000	270.00	
			Կենցաղային	450.0					

			քիմիայի գործարան						
			ԹԱԳ ՀԷՄ ՍՊԸ	396.0					
	Ֆորմալին /կգ/	480.0	«Յունիքիմ» ՍՊԸ	336.0	«Յունիքիմ» ՍՊԸ	21.04.2020թ	1000	336.00	
			ԹԱԳ ՀԷՄ ՍՊԸ	348.0					
			Լեյկո ՍՊԸ	500.0					
ՀՀ ԷՆ-ԳՀԱՊՁԲ-20/24	ԽԵԿ և ոչխարների խշխշան պալար հիվանդության նկատմաբ հիդրքսիդալյում ինային, ֆորմալինային պատվաստանյութ /մլ/	9,802.20	«Ագաստ» ՍՊԸ	9,560.00	«Ագաստ» ՍՊԸ	27.04.2020թ	1,153,200	9,560.00	
ՀՀ ԷՆ-ԳՀԱՊՁԲ-20/27	Թռչունների կեղծ ժանդախտ Հ շտամի կենդանի չոր պատվաստանյութ /մլ/	2,911.20	«Կարեն Հայրյան» Ա/Ձ	4,366.8	«Կարեն Հայրյան» Ա/Ձ	08.05.2020թ	1,455,600	2,183.40	
			«Ագաստ» ՍՊԸ	2,183.4					
ՀՀ ԷՆ-ԳՀԱՊՁԲ-20/28	Մեղուների վարրատոզի նկատմամբ բուժիչ կենսապատվաս	8,295.00	«Ագաստ» ՍՊԸ	7,797,3	«Կարեն Հայրյան» Ա/Ձ	22.06.2020թ.	23,700	7,999.92	
			«Մ.Պետրոսյան և որդիներ» ՍՊԸ	1,185,0					

	տուկ		«Կարեն Հայրյան» Ա/Ձ	7,999,9					
ՀՀ ԷՆ-ԳՀԱՊՁԲ-20/25	Կաթնասունների տուբերկուլյոզի ալերգիկ ախտորոշիչ	1,378.0	«Կարեն Հայրյան» Ա/Ձ	1,139.97	«Կարեն Հայրյան» Ա/Ձ	22.06.2020թ	4,240	1,139.97	
			Աբամա Թրեյդ ՍՊԸ	1,369.09					
			Ռուբեն Շբոյան Ա/Ձ	3,158.00					
	Ախտորոշման հավաքածու, ագլուտինացիայի ռեակցիա	480.00	Աբամա Թրեյդ ՍՊԸ	480.00	Աբամա Թրեյդ ՍՊԸ	24.08.2020թ	32	470.88 480.00	
ՀՀ ԷՆ ՀՄԱԱՊՁԲ-20/50	Կենդանիների դաբաղ հիվանդության նկատմամբ պատվաստանյութ	226,272.50	«Կենդանիների առողջության պահպանման ֆեդերալ կենտրոն»ՖՊԲԿ	222,371.25	«Կենդանիների առողջության պահպանման ֆեդերալ կենտրոն» ՖՊԲԿ	14.08.2020թ	3,121,000	222,371.25	
ՀՀ ԷՆ-ԳՀԱՊՁԲ 20/26	Արյան նմուշառման փորձանոթներ	4,000.00	Աբամա Թրեյդ ՍՊԸ	3,190.00	Աբամա Թրեյդ ՍՊԸ	03.08.2020թ	100000	3,166.07	
			ԹԱԳ ՀԷՄ ՍՊԸ	3,678.00					
	Ռետինե երկարաճիտք	1,800.00	Ռեալ Բուսինես ՍՊԸ	1,396.80					

	կոշիկներ		Աբամա Թրեյդ ՍՊԸ	1,517.40					
			Մեյք Թու մեյք ՍՊԸ	1,452,00					
			Էքոմիքս ՍՊԸ	1,232.40	Էկոմիքս ՍՊԸ	30.07.2020թ	600	1,232.40	
	Ընդամենը							***318,185.97***	